ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» փետրվարի 2020թ. N 16-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 7-րդ մասով, 35-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի միջնորդությունը, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 3-ի N 2 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Համարել կասեցված «Փարիզ-Ջեմմի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 16432-01 և «Կվադրա Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 16654-01 լիցենզիաների գործողությունը՝ ժամանակավորապես զրկելու միջոցով, չկիրառելով լիցենզիայի ողջ գործողության կասեցում:

2. Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետի պարտականությունները կատարող Գևորգ Սիմոնյանին՝

- Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Պարտականությունները կատարող՝

19.02.2020

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N2

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2019 թվականի մարտի 4-ի N23-Ա հրամանով ստեղծված լիցենզավորող հանձնաժողովի

03. 02. 2020 թ. ժամը 16.00-ին

Քաղաքաշինության կոմիտեում տեղի ունեցած նիստին ներկա էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	
Ռաֆայել Ավետիսյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ՝	
Արմեն Մինասյան	ՀՀ Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն ԲԲԸ գլխավոր տնօրեն
Արսեն Միրզոյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչության պետի պաշտոնակատար
Աղասի Հովսեփյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության գիտատեխնիկական քաղաքականության բաժնի պետ
Արամ Բաբաջանյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության խորհրդական
Հարություն Հարությունյան	ՀՀ Ճարտարապետության բաժնի պետ
Հանձնաժողովի քարտուղար՝	
Գևորգ Սիմոնյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության գլխավոր մասնագետ
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	
Արտավազդ Եսայան	քաղաքաշինական գործունեության, գեոդեզիայ և հողօգտագործման վերահսկողության բաժանմունքի պետ
Արմեն Ջիլավյան	քաղաքաշինական գործունեության, գեոդեզիայ և հողօգտագործման վերահսկողության բաժանմունքի գլխավոր մասնագետ

Օրակարգ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի միջնորդությամբ ներկայացված Կենտրոն վարչական շրջանի, Գ. Էմինի փողոց N 25 և Անտառային փողոց N 24/9 հասցեներում շինարարություն իրականացնող կազմակերպությունների՝ անհատ ձեռնարկատեր Թաթիկ Բաբկենի Վարդանյանի, «Փարիզ-Ջեմմի», «Արխի – Տուր», «Կվադրա Քոնսթրաքշն» և «Մեծն Գևորգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների լիցենզիաների կասեցման հարցի քննարկում:

- Ռաֆայել Ավետիսյանը ամփոփ ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը, որից հետո առաջարկեց լսել միջնորդագիր ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչներին, որից հետո շինարարական կազմակերպությունների ներկայացուցիչներին:
- Արտավազդ Եսայանը հակիրճ ներկայացրեց անհատ ձեռնարկատեր Թաթիկ Բաբկենի Վարդանյանի, «Փարիզ-Ջեմմի», «Արխի – Տուր», «Կվադրա Քոնսթրաքշն» և «Մեծն Գևորգ» շինարարական կազմակերպությունների կողմից Կենտրոն վարչական շրջանի, Գ. Էմինի փողոց N 25 և Անտառային փողոց N 24/9 հասցեներում իրականացրած աշխատանքները ոչ պատշաճ իրականացնելու պատճառով Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքի 157^{8}-րդ, 157^{13}-րդ և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածների համաձայն վերջիններիս նկատմամբ նշանակված տույժերի մասին: Նա նշեց նաև, որ իրավախախտումների հետևանքները դեռևս վերացված չեն և առաջարկեց «Փարիզ-Ջեմմի» և «Կվադրա Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների շինարարական լիցենզիաները կասեցնել՝ Անտառային փողոց N24/9 և Գ. Էմինի փողոց N25 հասցեներում լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքները իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկելու միջոցով՝ չկիրառելով լիցենզիայի ողջ գործողության կասեցում: կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:
- Շինարարական կազմակերպությունները խախտման պատճառի վերացման վերաբերյալ ներկայացրեցին իրենց կողմից նախատեսվող միջոցառումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից նշանակված վարչական տույժը չի բխում «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված դրույթներից և միաժամանակ նկատի ունենալով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 7-րդ մասով, 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները, այն է.
Եթե, խախտման բնույթից ելնելով, դրանք կամ դրանց հետևանքները հնարավոր է վերացնել լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկելու միջոցով, ապա այդ դեպքերում լիցենզիայի ողջ գործողության կասեցում չի կիրառվում:

Որոշվեց՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի միջնորդության վերաբերյալ լիցենզավորող հանձնաժողովը եզրահանգում է հետևյալ դիրքորոշման.

- օրենքով սահմանված կարգով «Փարիզ-Ջեմմի» և «Կվադրա Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների շինարարական լիցենզիաները կասեցնել՝ Անտառային փողոց N24/9 և Գ. Էմինի փողոց N25 հասցեներում լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքները (տրված N 16432-01 և 16654-01 լիցենզիաներ) լիցենզիայի գործողությունը ժամանակավորապես զրկելու միջոցով՝ չկիրառելով լիցենզիայի ողջ գործողության կասեցում,
- կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը,

Շինարարական կազմակերպություններին առաջարկել.

- խախտման պատճառների վերացման նպատակով նախատեսված միջոցառումները իրականացնելուց և օրենքով սահմանված կարգով արդյունքները ամփոփելուց հետո, այդ մասին տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե (լիցենզավորող մարմնին)՝ սահմանված կարգով լիցենզիայի տվյալ գործողության կասեցումը վերացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Ռաֆայել Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Մինասյան

Արսեն Միրզոյան

Աղասի Հովսեփյան

Արամ Բաբաջանյան

Հարություն Հարությունյան

Լիցենզավորող հանձնաժողովի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան